№ 212 ՀԻՆԳՇԱԲԹԻ 26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ — 1913 — ՀԻՆԳՇԱԲԹԻ 26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 212

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Ցայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".

TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲ.

Սեպտ. 1-ից մինչեւ հոկտ. 1-ը—85 կ.:
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Ցայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ) ~20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գանվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и Ко, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Պարիզում՝ Площадь Биржи 8

913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

## ԼԱՒ Է ԱՆԱԳԱՆ ՔԱՆ ԵՐԲԷՔ

«Մշակի» այսօրվայ համարում տըպում ենք Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի հրաւէրը՝ իր թեմի հայ ժողովրդին՝ փութալ իր լուման ձգել այն ընդհանուր գանձանակին մէջ, որից պէտք է կազմվի դպրոցական ֆոնդ հայոց եկեղեցական-ծխական դպրոցների պահպանութեան և բարգաւաճման համար:

Վաղուց պէտք է Մեսրոպ եպիսկոպոսը արձակէր այդ կոչը. վաղուց նա պէտք է իրագործէր եկեղեցու պետի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի և սինոդի հրամանը՝ հանգանակութիւն սկսել թեմի մէջ: Եւ շատ տարօրինակ է թւում, որ այդ կոչը, հրաւէրը անվում է թեմակալ առաջնորդի կողմից միայն այժմ, երբ մի քանի օր է մնում յոբելեանին, մինչ սինոդը վաղուց կարգադրել է հանգանակութիւն կատարել և վաղուց ուղարկել է հանգանակութեան թերթեր:

Մենք ուրիշ կերպ չենք բացատրում Մեսրոպ եպիսկոպոսի վարմունքը, եթէ ոչ նրանով, որ նա սպասում էր իր կատարած անտեղի միջնորդութեան հետեւանքին, այն է դպրոցական ֆոնդի հետ միասին և գրական ֆոնդ հիմնելու միջնորդութեան հետեւանքին. այլապէս, ոչ մի արդարացում չենք գտնում, որ Մեսրոպ եպիսկոպոսը ջանը իր ձեռքն է առնում միայն մետասաներորդ ժամու...

Այդ մասին նա, անշուշտ, ունի համար և հաշիւ տալու իր Պետին և հասարակութեանը:

Բայց դարձեալ լաւ է անագան, քան երբեք:

Մեսրոպ եպիսկոպոսի այդ անագան հրաւէրը մենք արդէն վաղուց ենք առել հայ ժողովրդին և մեր ընթերցողներին և յորդորել մասնակցել առատաձեռն նուէրներով դպրոցական ֆոնդի կազման:

Մեզ մնում է այժմ նորից կրկնել մեր հրաւէրը և յորդորել հայ հասարակութիւնը, հայ ժողովուրդը արժանիք տալ Էջմիածնի կոչին և նրա ներկայացուցիչ Մեսրոպ եպիսկոպոսի հրաւէրին:

Եթէ Մեսրոպ եպիսկոպոսը սկըզբում ձախորդ դիրք բռնեց, հակաժողովրդական ուղղութիւն ընդունեց համազգային Մեծ Յոբելեանի խնդրում, այդ մեզ չը պէտք է արգելք լինել, որ այժմ, երբ նա հասկացել է իր սխալը և ուղիղ ճանապարհի վրա կանգնել, արձագանք չը տանք նրա հրաւէրին և չը խնայենք մեր նուէրները:

Հ. Առաքելեան

# ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

## ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
24 սեպտեմբերի

Կ. Պոլիս.—Թիւրքիան համաձայնութիւն յայտնեց, որպէսզի Տօշեվը նշանակվի բուլղարական դեսպան Կ. Պոլ-

Բոլգար պատգամաւորները, բացի Սավովից, չորեքշաբթի մեկնում են Սոֆիա:

Կառավարութիւնը մտադիր է Թիւրքիայ զինուորական դեսպան նշանակել Սոֆիայում:

Թիւրք-բոլգարական պատգամաւորները ժողովվելու են սեպտ. 26-ին առեւտրական պայմանագիր և հիւպատոսական պայմանաթուղթ կապելու համար:

Զինուորական նահանգապետը լրագիրներով առաջարկում է 9-րդ զորաբանակի օֆիցերներին վերադառնալ անյապաղ իրանց զօրամասերը:

—

Վիէննա.—«Պոլիտիշէ-Կոր.»-ին հաղորդում են Սոֆիայից. «Տեղական քաղաքական շրջաններում աճում է յօգուտ ակտիվ քաղաքականութեան սկսված շարժումը, ի նկատի ունենալով ալբանական շարժումը մի կողմից և Թիւրք-յունական միջադէպը՝ միւս կողմից: Կառավարութիւնը դէմ է ագրեսիվ քաղաքականութեան, սակայն հաշւի է առնում ժողովրդական տրամադրութիւնը, որ պահանջում է Բոլգարիայից միջամտել: Այդ պատճառով՝ կառավարութիւնը փորձում է խաղաղ ճանապարհով վերաքննել տալ Բուխարէստի պայմանագիրը»:

—

Սոֆիա.—Բոլգարական գործակալութիւնը հաղորդում է. «Արժանահաւատ տեղեկութիւնների համաձայն, սերբ-հրոսակախմբերը ոչնչացրել են 4 մահմեդական գիւղ Կիչէվօ վիճակում: Սերբ իշխանութիւնները ստիպում են ոյժով բոլգարական գիւղացիներին կրակել ընդդէմ ալբանների և գերում են այդ հրամանը չը կատարող բոլգարներին: Մահմեդական, բոլգար և կուցօվալախ ազգաբնակութիւնը փախել է Մօնաստիր. մի քանի գիւղերի մահմեդականները փախել են լեռները»:

—

Սոֆիա.— Ֆերդինանդ թագաւորը մեկնեց արտասահման:

—

Բելգրադ.—«Պրէս-Բիւրօն» հաղորդում է, որ արտասահմանեան լրագիրներում երեւցած այն տեղեկութիւնը, թէ սահմանամերձ ազգաբնակութիւնը կազմակերպել է հրոսակախմբեր, որոնք դուրս են քշել սերբ զօրքերին Կօչանից, Ցարէվից և Դէխչէվա գիւղից և իբր շարժվել են դէպի Դիբր, անհիմն է:

Աթէնք.—Թիւրք լիազօրներն այցելեցին արտաքին գործերի մինիստրին և յանձնեցին թիւրքական հակառաջարկութիւնների բնագիրը: Մինիստրը խնդրեց ժամանակ տալ իրան ուսումնասիրելու այդ հակառաջարկութիւնները: Նրա կարծիքով, բանակցութիւնները երկարատեւ կը լինեն:

—

Հռոմ.—«Տրիբունան» առաջնորդող յօդուածում ասում է. «Թիւրքիան նորից ստացաւ Ադրիանուպոլիսը և չընչին ոյժ չէ ներկայացնում: Ո՞վ կարող է արգելել նրան, եթէ նա ունի բաւական ոյժ, վերադարձնել նաև Սալօնիկը: Իտալական քաղաքականութիւնը ուղղված պէտք է լինի խոչընդոտ հանդիսանալու Թիւրքիայի թուլանալուն, որ դեռ կարող է վերականգնել կարգուկանոնն ու քրիստոնեաների մեծ կամ փոքր ինքնավարութիւնը և սխորժակը: Եւրոպան և Իտալիան պէտք է օգնեն Թիւրքիային այդ խնդրում»:

—

Լոնդոն.—Գիշերս երկու կողմից բաստացվող հեռագիրները հաստատում են, որ «Համիդիէի» հրամանատարը գըտընվում է Հռոմի և Լոնդոնի ճանապարհին, նպատակ ունենալով ձեռք բերել ռազմնաւեր և օֆիցերներ ու նաւաստիներ ժողովել Թիւրքաց նաւատորմը ուժեղացնելու համար:

—

Լրագիրներից)

Վիէննայի լրագիրները հաւատացնում են, որ սերբիական զինուորական իշխանութիւնները զինուորա-դաշտային դատարանին են յանձնելու գերած 700 ալբաններին, որոնց բոլորին գնդակահարելու են:

—

Թիւրքական մամուլը պահանջում է օսմ. կառավարութիւնից՝ խլել յոյներից Սալօնիկը և Եանինան:

—

«Times» թերթը հաղորդում է, որ գեներալ Սավովը բանակցութիւն է վարում Բ. Դրան հետ թիւրք-բոլգարական զինուորական դաշն կռելու մասին:

—

Մինչև օրս սերբերը կորցրել են աւելի քան 100 մարդ սպանված, իսկ ալբանները մօտ 2000:

—

Սերբիան զէնքի կանչեց իր բոլոր պահեստի գնդերին:

—

Անգլիական ապահովագրական ընկերութիւնները հրաժարվեցին ապահովագրելու յունական նաւերը պատերազմի դէպքում:

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
24 սեպտեմբերի

Պէկին.—Վայցզիաօբուն տեղեկացրեց ռուսաց դեսպանին պրեզիդենտի ընտրութեան մասին և ճշդեց, որ չինական կառավարութիւնը պարտաւորվում է սրբութեամբ կատարել բոլոր պայմանագրերը: Այդ յայտարարութիւնից յետոյ դեսպանը կառավարութեան անունից իրազեկ արեց Վայցզիաօբուին, թէ Ռուսաստանը ճանաչում է չինական հասարակապետութիւնը: Նոյնը արին և միւս դեսպանները: Փոխ-պրեզիդենտ ընտրվել է Լիւ-անխուն:

—

Բերլին.—«Նորդ-Դոյչէ-Ալգ. Ցայտը» ողջունում է Իւանշիկային, սպասելով նրանից չինական քաղաքական դժուարին խնդիրների խելացի լուծում:

—

Իրուն.—Եկաւ Պուանկարէն: Մեկնելուց առաջ Պուանկարէն ստացաւ Ալֆոնս թագաւորի ողջոյնի հեռագիրը, ...... տածած անկեղծ բարեկամութեան ու ջերմ համակրութեան յայտարարութեամբ: Պրեզիդենտը թագաւորին ուղարկեց պատասխան հեռագիր սրտագին դարձուածքներով:

—

Մադրիդ.—Եկաւ Պուանկարէն և կայարանում դիմաւորվեց թագաւորից, թագաւորական տան անդամներից, կառավարութեան ներկայացուցիչներից և զանազան պատգամաւորութիւններից:

—

Մադրիդ.— Լրագիրները սրտագին ողջունում են Պուանկարէի գալուստը:

—

Կահիրէ.—Պաշտօնապէս հերքվում է եգիպտական մամուլի այն տեղեկութիւնը, թէ իբր դաւադրութիւն էր կազմակերպված Կիտչեների կեանքի դէմ Վենետիկում գտնված միջոցին:

—

Բրնօ.—Տեղի ունեցան ցոյցեր և ընդհարումներ չեխերի և գերմանացիների միջև: Մի քանի մարդ վիրաւորվեցին, մի շարք անձինք կալանաւորվեցին:

—

Տօկիօ.—Ծովային մինիստրութիւնը մշակել է նաւատորմը ուժեղացնելու ծրագիր, որ պահանջում է սկզբում 315 միլիօն իէն, յետոյ՝ 730 միլիօն:

## ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 2 սեպտեմբեր

Տարօնի աշխարհն ունի աւելի քան 300 զուտ հայ գիւղեր, որոնք բաժնուած են զանազան շրջաններու և թեմերու:

Ս. Կարապետի վանքը շնորհիւ իր դիրքին և առանձնայատուկ պայմաններուն, կոչուած է ըլլալ վեց կարեւոր հայաշատ գաւառներու կրթութեան բարձրագոյն հնոցը, վառարանը: Այդ գաւառներու ամբողջ հայութիւնը կը փափագի, որ իր գիւղերէն ամէն մէկը տարեկան գոնէ 2-ական աշակերտ մտցնէ ս. Կարապետի վարժարանը: 200-էն աւելի խնդրատուներ են եղած այս տարի, բայց վանքը հազիւ կարողացեր է 15 նոր խնդրատուներու գոհացում տալ: Արդէն վանքը հազիւ 55—60 աշակերտ կը պահէ 5 ուսուցչով:

Օսմանեան պարլամենտի Մուշի երեսփոխանը՝ Գեղամ Տէր-Կարապետեան հայ գրերու գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ կրկին յոբելեաններու առթիւ հրատարակած է Կ. Պոլսոյ թերթերուն մէջ կոչ մը՝ հրաւիրելով ընդհանուր հայութիւնը՝ յաւերժացնելու ս. Սահակի և Մեսրոպի յոբելեանը Տարօնի մէջ բարձրագոյն կրթարանի մը հաստատումով: Եւ ո՞ւր պիտի հաստատուի այդ բարձրագոյն կրթարանը կամ, ուրիշ խօսքով, Տարօնի միջնակարգ վարժարանը, եթէ ոչ՝ ս. Կարապետի վանքին շրջափակին մէջ: Բայց թէ ինչ միջոցներով, այդ արդէն ցոյց է տրուած յիշեալ կոչին մէջ:

Անշուշտ՝ այդ կոչին հիմնական գաղափարը համակրելի է, և չեմ կարծեր որ մեզմէ ոեւէ մէկը գտնուի, որ առարկէ թէ Տարօնի հայութիւնը պէտք չունի միջնակարգ վարժարանի:

Գալով սակայն միջոցներուն, որոնց մատակարարումով պիտի կառավարուի այդ վարժարանը, թող ներուի մեզ, եթէ մենք

412 ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆ 1912

Տառերի գիւտի 1500-ամեակի առթիւ Ս. ՍԱՀԱԿԻ, Ս. ՄԵՍՐՈՊԻ մեծադիր, ֆօտօ-գրաւիւր պատկերների գոյգը 3 ր., Ս. ԷՋՄԻԱԾԻՆ և ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ ՕԾԱԿԱՆՈՒՄ պատկերների հետ 5 ր...լի:

Կուղարկվեն յատուկ խողովակներում:

Դիմել՝ Тифлисъ, БЮРО-ПЕЧАТИ
Головинскій пр. 41.

(օ. մ.) տп. 31 5—4

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ.
✦ ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ №7.
357. Ѳ—41 (հ.կ.)

ԿՆՍՐՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բեհբուտովսկայա 13, տելեֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանանց և թէ տղամարդկանց, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:

Ընդունելութիւն կանանց, տղամարդկանց և մանկական հիւանդութիւն ունեցող երթեւեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը:

Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Ցարուխեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ռ. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ս. Տէր-Ներսէսեան
Ն. Զ. Ռամիկեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Տահպարոնեանց

(հ.կ.) տп. 779 100—90

ՓՈՐՁԵՑԷՔ ԾԽԵԼ ՆՈՐ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ
ԶԵՅԿԱ
ԸՆԿ. „ԿՕՄԷՏԱ"
ԹԻՖԼԻՍ
20 հատը 6 կ., 10 հատը 3 կ.

(հ.կ.) տп. 803. 10—2

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի):

Ընդունելութիւնը՝
Ամեն օր ( Առաւօտեան ժ. 9—2-ը
( Երեկոյեան ժ. 4—7-ը

Անկիւն Արաս-Արաղսկայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.

(հ.հ.կ.) տп. 769. 74—7

ԵՐԴՈՒԵԱԼ-ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ
Գ. Խ. ԽՕՋԱՄԻՐԵԱՆԸ
ՏԵՂԱՓՈԽՎԵՑ
ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐ. № 18.
տп. (օ. մ.) 789. 6—5

ԲԺԻՇԿ
Ե. ՔԵՐԵՍՏԷՃԵԱՆ

ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՅԻՆ հիւանդութիւններ:
(Առանձն. կրծքի, թոքախտի և սրտի պակասութեան)

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ամեն օր ( Առաւօտեան ժ. 12—2-ը
( Երեկոյեան ժ. 5—7-ը

Դրաֆսկայա, 3 (Լօրիս-Մելիքօվսկայա փողոցի կողմից):

(հ.հ.կ.) տп. 774. 100—6

ԲԺՇԿՈՒՀԻ
ՄԻՍ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ
(Մասնագէտ մեզասեռային, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւնների)

վերադառնալով արտասահմանից վերանորոգեց հիւանդների ընդունելութիւնը ցեր. ժամը 1—4-ը և երեկ. ժամը 7—9-ը, Միխայլովսկի պր., 38. տելեֆոն 6—63.

(հ. հ. կ.) տп. 753. 10 8

այդ մասին տարբեր կերպով մտածենք, քան յիշեալ կոչին հեղինակը։

Տարօնի հայութիւնն այդ ցանկալի հաստատութիւնն իր մէջ մարմնացած տեսնելու համար ամենևին պէտք չունի այնպիսի միջոցներու դիմելու, որոնք քիչ մը կը մօտենան մուրացկանութեան և զորս կը յանձնարարէ Գ. Տէր-Կարապետեան։

Ս. Կարապետի վանքը այնքան հարուստ է, որ կրնայ իր իսկ սեփական միջոցներով շատ դիւրութեամբ միջնակարգ վարժարան մը պահել, այն ալ ներկայ պայմաններուն մէջ, միայն թէ...

Եւ ահա հոս է ցաւոտ հարցը։

Այդ դարաւոր ու պատկառելի վանքը իր այժմեան վանահօր օրով այնպիսի պայմաններու մէջ կը գտնուի, որոնց շարունակութիւնը կը սպառնայ այդ հաստատութեան ոչ միայն ապագայ բարօրութեանը, այլ նոյնիսկ ներկայ շէնութեանը։ Արդ, ինծի կը թուի թէ այսպիսի պայմաններու տակ Գեղամ Տէր-Կարապետեանի առաջարկած ձևով եթէ նոյնիսկ հայկական համալսարան հիմնուի ս. Կարապետին պարիսպներուն մէջ, անոր գոյութիւնը դարձեալ տևական չի կրնար ըլլալ։ Այդ վանքին բարեկարգութեան խնդիրը տարիներէ ի վեր շարունակ զբաղեցուցած է և կը զբաղեցնէ Տարօնի ազգ. գաւառական ժողովը. այդ խնդիրը երբեմն ալ արձագանգած է Կ. Պոլսոյ ազգ. կեդրոնական վարչութեան մէջ՝ Տարօնի վանօրէից բարեկարգութեան հարցը արծարծուած միջոցին։ Այդ նոյն խնդիրը քանի-քանի անգամ նիւթ ծառայած է մեր լրագրութեան համար, որուն մէկ քանի օրգանները այնքան յառաջ գացած են—և իրաւամբ—որ ս. Կարապետի վանքը անուանած են «Վարդան վարդապետի քէօշկը» և բացարձակ կալուածքը, որովհետև վանքի վարժարանին 52 աշակերտներէն 40-ը այժմեան վանահօր հայրենակիցներն են, իսկ պաշտօնէութեան 75%-ը՝ անոր ազգականները։ Ասոնք իրողութիւններ են, զորս չը տեսնելու համար՝ տարօնցին չի կրնար իր աչքը գոցել։ Աւելի զատ՝ վանքին այժմեան մատակարարութիւնը ընդհանրապէս այնքան քննադատելի կողմեր ունի, որ Տարօնի ազգ. ընդհ. ժողովը օգոստ. 23-ին բացարձակ մեծամասնութեամբ անվստահութեան քուէ տուաւ ս. Կարապետի վանական արդի կառավարութեանը և վճռեց անյապաղ կոնտրոլի ենթարկել վանքին տնտեսութիւնը։

Արդ, այս ամենը, որոնք անժխտելի իրողութիւններ են, մեզ կը բերեն այն անխուսափելի եզրակացութեան, թէ ժամանակ է, որ մեր ազգային իշխանութիւնները, յանուն Տարօնի տառապեալ հայ ազգաբնակութեան կուլտուրական և կրթական շահերու, խորին ուշադրութիւն դարձնեն մեր վանօրէից բարեկարգութեան խնդրին և միանգամայն ազատեն ս. Կարապետի և ս. Յովհաննու վանքերը իրենց ներկայ վարիչ-վանահայրերէն։

Ժամանակ է, վերջապէս, մեր հին ցաւերուն դարմանը հոգալու։ Իսկ այդ դարմանը պիտի ըլլայ ոչ թէ անհամապատասխան պաշտօնեաներուն աստիճանը բարձրացնելով ու եպիսկոպոսացնելով—ինչպէս դեռ կան առաջարկողներ մեր մէջ—այլ զանոնք փոխարինելով իրենց յանձնուած պատասխանատու պաշտօններէն։

Տ. Սար.

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

## ՀՐԷԱՆԵ՞Ր ԵՒ ՀԱՅԵՐԻՑ ԱՌԱՋ

Հրէայ ազգի ինքնագիտակցութիւնը օրէցօր աւելի զգալի առաջ է մղվում, զարգացման մի աւելի յարմար գետին պատրաստելու և միաժամանակ ստեղծելու մի այնպիսի գոյավիճակ, որի մէջ կարող լինի նոյնիսկ վերակենդանացնել իր փառաշուք թագաւորութեան ուրախական ու ցնծալից օրերը, որ արդէն մօտ քսանումէկ դարերից ի վեր բաժան-բաժան եղել է այլ ազգերի գերիշխանութեան տակ։

Ինչպէս ասում են մեր լուսաւոր դարի գիտականները, ինքնաճանաչութիւնն է ինքն իրան քննելը, իսկ քննել ու յետախուզել ինքն իրան և գտնել իր յետամնացութեան պատճառները, դա ինքնին իսկ ինքնաճանաչ ազգի գործն է։ Առանց այդպիսի մի քննութեան չի կարող ոչ մի ազգ [illegible] ուզում է կեանքում ապրել ու մի քիչ կենդանութիւն ցոյց տալ։

Պէտք է ասել, որ հրէայ ազգը վերահասու եղաւ այդ ինքնաքննութեան պէտքին, մանաւանդ այս վերջին դարերիս մէջ, և նկատեց, որ չունի արդարև մի այնպիսի ազգային հաստատութիւն, որի մէջ հնարաւոր լինի ազգային կեանքը մշակել ու ինքնագիտակից մի ազգայնութիւն ստեղծել, որը սակայն անհրաժեշտ էր։ Ահա այդ մտածմունքը ի գործ դնելու համար մի արտակարգ կենդանի ու եռուն շարժում սկսել է նրանց մէջ։ Ի հարկէ միանգամից իրանց առաջադրած նպատակին դժուար թէ հասնեն, բայց չէ՞ որ երկաթները պատրաստվում են, և այն՝ երկար տարիներ, ապագայ կատարվելիք մեծագործութիւններ գլուխ բերելու համար. մի նոր տուն հօ մի օրում կարող չէ շինվել առանց քարի, ցեխի և փայտի և այլն պատրաստութեան։ Սոյն սկզբունքի վրա յենված՝ հրէաները ձեռնարկում են փառապանծ հաստատութիւններ կառուցանելու, ինչպիսին է Երուսաղէմի մէջ հիմնվելիք համալսարանը, ուր պիտի լինի հրէաների գլխաւոր կենտրոնատեղին, նրանց ազգային ոգին արծարծող վառարանը, որից լոյս պիտի սփռվի ցիրուցան այն բոլոր հրէաներին, որոնք թափառական շրջաններ են գործում երկրէ երկիր, տեղէ տեղ, առանց իրանց ոտքի տակ կռուան և մի յատուկ ազգային սեփական գետին ունենալու։

Վիէննայում հրէական համաժողովի բացումը արդէն տեղի ունեցաւ խանդավառ ցոյցերով, ուր ժողովված էին նախագահութեամբ Վարպուրգի՝ մօտ 5000 անձեր։ Նախագահը ոգևորված գործի աջողութիւնից՝ ջերմօրէն խօսեց հրէայ ազգի բարեմասնութիւնների մասին, բայց մանաւանդ շեշտեց նրանց օսմանեան պետութեան ունեցած հլու հպատակութիւնը և այն համակրութիւնը, որ ունի հրէայ ազգն օսմանեան պետութեան հանդէպ, և թէ ինքը հրէայ ազգը պիտի մասնակցի Թիւրքիայի վերածնութեան գործին իր հոգեկան ու նիւթական բոլոր ուժերով։ Ապա Նահում Սոքոլովը բաւական մանրամասնօրէն պարզեց հրէական գաղթականութեան առաջադիմութիւնը, նրա չարքաշութիւնը և գործի կպչելու յամառ աշխատասիրութիւնը։ Այս ճառախօսներին հետևեցին դեռ ուրիշներ իրանց թեզիս ընտրելով զանազան տեսակէտներ՝ հրէայ ազգի զարգացման նպաստող։ Ընդհանուր բանախօսութիւններից, խօսակցութիւններից ու ձեռնարկելիք գործի մասին պէս-պէս կարծիքներ արտայայտվելուց յետոյ հրապարակով կարդացվեց Մաքս Նորդաուի այն մի նամակը, որով նամակագիրը թիւրք կառավարութիւնը պարսաւում է և սիոնիստների ներկայ մտածված ձեռնարկութեանը հակառակում։ Ի հարկէ բուռն եղանակով պարսաւեց ժողովը Մ. Նորդաուի նամակի բովանդակութիւնը և նրա հակաթիւրք քաղաքանութիւնը՝ աղմկալից ժխորներով, և սրանով աւարտվեց առաջին ժողովը։

⁂

Հայը ինչ է անում իր ներկայ հրատապ հարցը Եւրոպային զգալի անելու համար։ Այո, նա էլ կոմիտէներ է կազմում և խօսում է այստեղ ու այնտեղ, բայց ի՜նչ ցածր ու երկչոտ ձայնով, հէնց կարծես մի վախլուկ նապաստակ լինի, որ չի համարձակվի քարի տակից դուրս գալ և իր ցաւն համարձակ ասել, ասել տասն, քսան անգամ, մինչև որ լսելի լինի։

Եւրոպայից հեռու՝ մի փոքրիկ քրիստոնեայ ազգութիւն Ասիայի մէջ դարերով հարստահարվում, կոտորվում, ջարդվում, կողոպտվում է, տուն, ինչք, պատիւ խլւում են նրա ձեռքից, և նա մնում է անտէր անտիրունչ. ասացէք, մինչև ե՞րբ անօգնական պիտի մնայ նա, միթէ մի փոքրիկ օգնութիւն պիտի չը գտնէ իր քրիստոնեայ եղբայրներից։ Հայութիւնը հրաժարվում է ինքնուրոյն ինքնավարութիւնից. հազար անգամ կրկնված է այդ մեր պարբերական թերթերի մէջ. մենք լոկ ուզում ենք, որ բարեկարգվի մեր երկիրն էլ ինչպէս քաղաքակիրթ երկիրներ, և այդպիսով՝ մի անգամ ընդ միշտ վերջ դրվին այն անլուր ոճիրներին, որոնց զոհ է գնում հայն ամեն մի քայլափոխում ցաւալիօրէն։

Արևելքում չէ կարող խաղաղութիւնը տևական լինել, քանի որ հայկական հարցը հրապարակի վրա է ու իր վերջնական լուծումը չէ գտած. և քանի որ այդ անկարգ երկրին իշխող տարրը թիւրքն է, նա միշտ հայի վրա պիտի նայի իբր մի գեավուրի վրա և թոյլ պիտի չը տայ, որ նա զարգանայ անտեսապէս ու քաղաքականօրէն և ազատ ապրի։

Հայկական հարցը բաւական ժամանակ վառ հետաքրքրութիւն էր պատճառել եւրոպական մեծ պետութիւններին, և մենք ուրախ էինք, որ անպատճառ այս անգամ մի որևէ դարման լինելու է չարչարվող հայի մասին էլ։ Բայց ներկայումս շատ յամր քայլեր սկսեց առնել և համարեա բոլորովին լռութեան դատապարտվեց։

Սակայն մենք հայերս պէտք չէ որ դադար առնենք գործելուց, այլ ընդհակառակը՝ անջատ անջատ գործող կոմիտէները պէտք է միանան և մի ընդհանուր ոյժ կազմեն։ Պօղոս Նուպար փաշան, որ մեր ներկայ հայկական հարցն իր ձեռքն է առել, ինչպէս յայտնի է, վերջերս Գերմանիա այցելեց և տեսակցութիւն ունեցաւ գերմանական դիւանագիտական շրջաններում։ Այժմ նա, ինչպէս լսում ենք, մտադիր է այցելել Աւստրիա, ի նկատի ունենալով որ մեծ մասամբ Վիէննայի շրջաններում հայկական հարցն այսպէս ասած բաւական համակրութիւն է գտած։

Վիէննա

Ջերգասով

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Ինչպէս յայտնի է, Պոլսոյ մեծ տէրութեանց դեսպանատանց առաջին թարգմաններէն բաղկացած յանձնաժողով մը կազմուած էր, որ պաշտօն ունէր հայկական նահանգներու մէջ գործադրելի բարենորոգմանց համար ռուսաց դեսպանատան առաջին թարգման Մանէլշթամի և օսմ. կառավարութեան կողմէ գրի առնուած ծրագիրները նկատի առնել և պատրաստել տիպար ծրագիր մը, որ թէ գործադրելի ըլլայ և թէ համապատասխան բոլորին շահերուն։ Նոյնպէս յայտնի է, թէ այս յանձնաժողովը իր աշխատութիւնները լրացնելէ վերջ տեղեկագիրը ներկայացուցած էր Պոլսոյ մեծ դեսպաններուն, որոնք զայն ղրկած էին իրենց պետութեանց դահլիճներուն և հրահանգ խնդրած այդ մասին։ Այդ տեղեկագրին մէջ կ'ըսուէր, թէ Պոլսոյ դեսպանական յանձնաժողովը ընդունած էր Մանդելշթամի ծրագիրը։

Արդ, արժանահաւատ աղբիւրէ մեզ կը հաւաստեն, թէ Պոլսոյ դեսպանատուններէն ոմանց արդէն իսկ այդ մասին հարկ եղած հրահանգները եկած ըլլալուն, չորեքշաբթի օր (սեպտ. 11) նոյն դեսպանական յանձնաժողովը նորէն գումարուած է աւստրիական դեսպանատան մէջ և եկած հրահանգները քննելով տեսած է, որ յիշեալ պետութիւններն ալ կը հաստատեն յանձնաժողովին տեղեկագիրը և զայն ամենանպատակայարմար կը նկատեն։

Այժմ կը սպասուի մնացեալ դահլիճներու կողմէ տրուելիք պատասխաններուն, որմէ վերջ յիշեալ ծրագրի գործադրութեանը մասին Բ. Դրան մօտ կատարելի դիմումին ձևն է որ պիտի որոշուի։

(«Ժամանակ»)

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈԲԵԼԵԱՆ

## ԹԻՖԼԻՍԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԸ

Թիֆլիս, 25 սեպտեմբերի

Դպրոցական ֆօնդի համար հանգանակութիւն անելու նպատակով դիմում եմ քաղաքիս հայ ազգաբնակութեան բոլոր դասակարգերի յարգելի ներկայացուցիչներին, ի թիւս որոց և ձեզ, և խնդրում, որ դուք, մեծարգոյ պարոն, չը խնայէք ձեր եռանդուն աջակցութիւնը այդ մեծ նպատակի համար։

Սրա հետ ուղարկում եմ ձեզ հանգանակութեան № 2931 թերթը և խնդրում, որ հաճիք ձեր շրջանում առատաձեռն նուիրաբերութեան հրաւիրել մեր սիրելի ազգայիններին և հանգանակութիւնը աւարտելուց յետոյ մինչև յօբելեանական տօների սկսվելը՝ նուիրատուութեան թերթերը ժողոված գումարի հետ միասին ուղարկել մեզ։

Մնամք ջերմեռանդ աղօթարար՝
Առաջնորդ Թեմի՝
Մեսրոպ եպիսկոպոս

Ծանօթ.—Տպագրելով առաջնորդի այս գրութիւնը, պարտ ենք համարում յայտնել, որ ուրախութեամբ կընդունենք նուէրները։ Խմբ.

## ՀՐԱՒԷՐ ԹԻՖԼԻՍԻ ԹԵՄԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Առաջիկայ հոկտ. 13-ին, պատմութեամբ սահմանված Թարգմանչաց տօնին, ազգիս Վեհափառ Կաթողիկոսի կոնդակի համեմատ, թեմիս բոլոր եկեղեցական և կրթական հաստատութիւնների մէջ պէտք է հանդիսաւոր [illegible] ունենան հայ գրերի գիւտի 1500-ամեակը և հայկական տպագրութեան 400-ամեակը լրանալու առիթով։

Այդ կրկնակի մեծ տօնը յաւերժացնելու համար Վեհափառ Կաթողիկոսը իր կոնդակով պատուիրել է Ռուսաստանի թեմերի բոլոր հայ առաջնորդներին հանգանակութեամբ մի ֆօնդ կազմել, որի տոկոսներով պահվեն հայոց եկ.-ծխ. դպրոցները, և դրա համար ստացել է թոյլտուութիւն Կովկասի տէր փոխարքայից և ներքին գործերի մինիստրից։

Գրերի գիւտի ժամանակակից Կորիւն վարդապետի պատմելով, ս. Սահակի և ս. Մեսրոպի ջանքերով ամենակարճ ժամանակում երկիրը ծածկվեց դպրոցների ցանցով և կէս դար անց ստեղծվեց հայ գրականութեան և կուլտուրայի ոսկեդարը։

«Յայնժամ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր, յորում յանկարծ... ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայերէնախօսք գտան»։

Այս պատմական մեծ փաստը տեղի ունեցաւ Փրկչական 412 թ. առաջ. մենք ապրում ենք 20-րդ դարում, և սակայն այսօր հայ ժողովուրդը իր մեծամասնութեամբ դպրոց չունի, տգէտ է, յետամնաց և ուսման ծարաւի։

Այս հրաւէրը ուղղելով թեմիս հայ ժողովրդին՝ յիշեցնում ենք նրան, որ մեծ տօնի առիթով մեր առաջ է դրված մեր դպրոցի պահպանութեան և ապահովութեան մեծ խնդիրը. հրաւիրում ենք ամեն մի հային, որը 15 դար գրերի գիւտի բարիքները վայելող ժողովրդի զաւակն է, խղճմտօրէն գիտակցել տօնի և նրա հետ կապված մեծ ֆօնդի կարևորութիւնը և օգնութեան ձեռք կարկառի հայ կարօտ դպրոցին։

Ժամանակին դիմումն է եղած, տօնի օրերն են հասել, և մենք յիշեցնում ենք հայ հասարակութեան, թող ամեն ոք իր կարողացածին և ցանկացածին չափ փութայ իր նուէրը տալու։ Քաղաքումս հաստատութիւնների և դասակարգերի ներկայացուցիչների միջոցով պիտի կատարվի հանգանակութիւն, իրանց ձեռին ունենալով տպագրած, պաշ- [illegible] թեան թերթեր։

Նուէրները կընդունվին և կարձանագրվին նաև առաջնորդարանում ամեն ժամանակ։

Ամեն օր լրագիրներում կը տպագրվեն հանգանակած գումարների ցուցակները։

Առաջնորդ Թեմի՝
Մեսրոպ եպիսկոպոս

## ՀԱՅ ԳՐԵՐՈՒ ԳԻՒՏԻ ՀԱՆԴԷՍՆԵՐԸ

(Կ. Պոլսի պատրիարք. տեղապահի շրջաբերականը)

Ազգային կեդրոնական վարչութեան խառն ժողովոյ յանձնարարութեամբ և կեդր. ուսումնական խորհրդոյ կարգադրութեամբ որոշուած է տօնել առաջիկայ հոկտեմբերի 13-ին, կիրակի օր, մայրաքաղաքիս բոլոր

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՖՐԱՆՍ-ԻՏԱԼԱԿԱՆ ԴԻՊԼՕՄԱՏԻԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մի քանի ամիս է, ինչ ֆրանս-իտալական դիպլօմատիական յարաբերութիւնները խուլ կերպով հետզհետէ աւելի թշնամական կերպարանք են ստանում։ Իտալական պաշտօնական մամուլը, դրդված իր կառավարական շրջաններից, օրէ-օր աւելի ակնյայտնի թշնամական վերաբերմունք է ցոյց տալիս Ֆրանսիային և շաբաթ չի անցնում, որ նա մի նոր առիթ չը գտնի ագրեսիվ պօլեմիկաներ մղելու Ֆրանսիայի վարած արտաքին քաղաքականութեան դէմ, երբ այդ քաղաքականութիւնը ամենաչնչին չափով իսկ շօշափում է իտալական շահերը, լինի դա արդարացի թէ անիրաւացի, անմիջական թէ միջնորդական կերպով։

Թէև այս երկու պետութիւնները եւրոպական հաւասարակշռութիւնը կազմող երկու եռապետութիւնների մէջ իրանց քաղաքական շահերով միմեանց ախոյեաններ են հանդիսանում և որպէս այդպիսիք՝ նրանց քաղաքական շահերը բնանհրաժեշտօրէն պէտք է միմեանց դէմ մշտական հակամարտութեան մէջ լինէին ու դիւանագիտական գործելակերպերը փոխադարձաբար միշտ հակակշռող, սակայն մինչև վերջերս քաղաքական արենի վրա հրապարակ չէր եկել մի այնպիսի շօշափելի հարց, որ անմիջապէս շարժառիթ դառնար Ֆրանսիայի և Իտալիայի պետական-քաղաքական շահերի հակասութեան մարմնացեալ արտայայտութեանը, նրանց՝ անուղղակի կերպով իրար բաղխվելուն։ Ճիշդ է, բալկանեան և առհասարակ արևելեան հարցը քանիցս պատճառ դարձաւ մի շարք զգալի տատանումներ առաջ բերելու եւրոպական հաւասարակշռութեան հակադիր ոյժերի մէջ, նա մի քանի անգամ սպառնաց մինչև անգամ իրար բաղխեցնել տալ այդ երկու ոյժերը, սակայն, մի կողմ թողած եւրոպական միւս պետութիւնները, գոնէ ֆրանս-իտալական յարաբերութիւնների վրա մի անմիջական և զգալի ազդեցութիւն չունեցաւ. երկու ախոյեան եռապետութիւնները որոշ համազօր փոփոխութիւններ կրեցին, մի շարք համազօր կոնցեսսիաներ ստացան Արևելքում և եւրոպական հաւասարակշռութեան վտանգաւոր տատանումները և սպառնալից շարժումներն աստիճանաբար հանդարտվեցին, առանց երբէք յանգելու վերջնական անշարժութեան։

Սակայն այն օրից, երբ գերման-աւստրո-իտալական եռապետութիւնը վերահաստատեց իր զինակցութիւնը, այն օրվանից, երբ երրեակ զինակցութիւնը, իր սկզբնաւորութեան օրից միշտ աւելի կասկածոտ, միշտ աւելի զգոյշ և աւելի գործունեայ, քան երրեակ դաշնակցութիւնը, վերանորոգեց ու աւելի ևս ամրապնդեց իր միութեան կապերը, այդ օրվանից ֆրանս-իտալական դիպլօմատիական յարաբերութիւնները բոլորովին այլ կերպարանք ստացան։ Այդ ակտի միջոցին Իտալիան յանձն է առել իր դաշնակիցների թելադրանքով ու աջակցութեամբ գլուխ բերել մի այնպիսի ծրագիր, որ իր էութեամբ ամբողջովին ուղղված է Ֆրանսիայի դէմ և որի իրագործմանը նուիրված առաջին իսկ քայլին նա Ֆրանսիայի հետ անմիջական մրցման մէջ է մտնելու և զօրեղ բաղխման հանդիպելու։

Արդարև, երրեակ զինակցութիւնը իր տերրիտօրիաների աշխարհագրական դիրքերով մի անընդհատ, շարունակական պատուար է կազմում հիւսիսից հարաւ եւրոպական մայր ցամաքի վրա և այդպիսով բաժանում է երրեակ դաշնակցութիւնը կազմող պետութիւնները միմեանցից, այսինքն՝ Անգլիան ու Ֆրանսիան՝ Ռուսաստանից։ Իսկ ցամաքի վրա նա իր զինուորական ոյժն արդէն այնքան է զօրեղացրել, նամանաւանդ Գերմանիան, որ իրան համարեա թէ կարող է զգում ազատ կերպով հակակշռելու և թերևս գերազանցելու երրեակ դաշնակցութեան ցամաքային ոյժին։ Սակայն ոյժերի նոյն յարաբերութիւնը գոյութիւն չունի երկու եռապետութիւնների նաւատորմի մէջ։ Երրեակ զինակցութեան ծովային ոյժը Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի նաւատորմի հետ համեմատած՝ բաւական թոյլ է և այդ տեսակէտից նրա ապահովութիւնը ծովի վրա մի զգալի մինուս, մի նկատելի բաց է ներկայացնում։ Անխուսափելի գտնելով ամրացնել այդ թոյլ կողմը և ծովային ոյժով ևս հակակշռել իր հակառակորդին, երրեակ զինակցութիւնը իր վերահաստատման խորհրդի մէջ ծրագրել է զօրեղացնել իր նաւատորմը հիւսիսում Հիւսիսային ծովի և հարաւում՝ Միջերկրականի վրա։ Ըստ այդ ծրագրի, Գերմանիան յանձն է առել Հիւսիսային ծովում հաւասարել Անգլիային և այժմեանից իսկ զինուորական մինիստրութիւնը կառավարութեան հետ ձեռք ձեռքի տուած՝ նաւատորմի զօրեղացման ծրագիրն է ուրուագծում և նախահաշիւը կազմում յաջորդ տարվայ պետական բիւջէի մէջ մտցնելու, իսկ Իտալիան պարտաւորվել է Միջերկրական ծովում գերմանական սիստեմով մի զօրեղ էսկադրօն ստեղծել, որպէսզի կարողանայ մրցել ֆրանսիական նաւատորմի հետ։ Այսպիսով երրեակ զինակցութեան ցամաքային պատուարը կը տարածվի հիւսիսից և հարաւից՝ շարունակվելով ծովերի վրա և կարիքի դէպքում իր ախոյեանի ոյժերը բաժանելու գործը աւելի կատարեալ կը դառնայ։

Երրեակ զինակցութեան այս նոր ծրագիրը ծնունդ է տալիս մի ծանրակշիռ հարցի—Միջերկրականի հարցին—որ շատ մօտիկ ապագայում պիտի հանդէս գայ անշուշտ և նորանոր բարդութիւններ ու մտահոգութիւններ պատճառէ ոչ միայն Ֆրանսիային, այլ և Միջերկրականի շուրջը գտնված բոլոր պետութիւններին ու առհասարակ ամբողջ Եւրոպային։

Իտալիայի յանձն առած այս պարտականութիւնը—ստեղծել Միջերկրականի վրա մի զօրեղ նաւատորմ ֆրանսականի դէմ մրցելու համար—ինքն ըստ ինքեան բաւական է հասկանալի կացուցանելու ֆրանս-իտալական դիպլօմատիական յարաբերութիւնների այն զգալի փոփոխութիւնը դէպի թշնամականը, որ առանձնապէս աչքի է ընկնում վերջին մի քանի ամիսների ընթացքում և որ աւելի ևս սուր կերպարանք ստացաւ վերջերս շնորհիւ այն տեսակցութեան, որ ունեցել էր ֆրանսիական մինիստրների նախագահ Բարտուն իտալական ամարանոցներից մէկում իտալական պաշտօնական մամուլի ներկայացուցիչներից մէկի հետ։

Ինչպէս յայտնի է, վերջին թիւրք-իտալական պատերազմից յետոյ Իտալիան իր ձեռքին է պահել Եգէյեան ծովի կղզիներից մի քանիսը որպէս գրաւական այն պայմանների իրագործման, որ Թիւրքիան Լօզանի դաշնագրութեամբ յանձնառու է եղել կատարել, բայց որ մինչև այժմ չեն իրագործված։ Ըստ նոյն դաշնագրութեան, Իտալիան, իր պահանջներին բաւարարութիւն ստանալուց յետոյ, պարտաւորվում է յիշեալ կղզիները յանձնել Թիւրքիային, պայմանով որ այդ կղզիների ապագայ վիճակը որոշվի մեծ պետութիւնների կօնֆերանսում և որ ինքը, Իտալիան, ակտիվ ձայնով մասնակցութիւն ունենայ այդ կօնֆերանսում։ Անկասկած, Իտալիան մտադրութիւն ունէր շահագործել այս վերջին կէտը և յենվելով նրա վրա՝ մի կտոր պոկ տալ Թիւրքիային։ Իսկ այժմ, երբ հրապարակ է եկել Միջերկրականի նաւատորմի հարցը, Լօզանի դաշնագրութեան վերոյիշեալ կէտը, որ մի անգամ էլ կրկնվել է Լօնդոնի կօնֆերանսում, աւելի մեծ նշանակութիւն և արժէք է ստանում Իտալիայի համար, որից և այն շահախնդրական և աչալուրջ վերաբերմունքը, որ Իտալիան նորերս մեծ խանդով ցոյց է տալիս կղզիների հարցին։

Արդ, ֆրանսիական մինիստրների նախագահը իտալական պաշտօնական մամուլի ներկայացուցչի հետ ունեցած տեսակցութեան միջոցին երկու երկիրների փոխադարձ բարեկամական յարաբերութիւնների ամրապնդման ցանկութիւններ յայտնելուց բացի՝ դժբաղդութիւն է ունեցել նաև շօշափել Եգէյեան կղզիների հարցը, Իտալիայի համար ներկայումս խիստ այժմէական և փափուկ կէտը, թոյլ տալով իրան մի փոքրիկ և անմեղ թիւրիմացութիւն. նա յայտնել է այն աներկբայ համոզմունքը, թէ Իտալիան, արևելեան հարցի առանց այն էլ խառնիճաղանճ դրութիւնն աւելի ևս չը բարդացնելու համար, կը կատարէ Լօնդոնի կօնֆերանսում հրապարակով արած խոստումը, վերադարձնելով Եւրոպային Եգէյեան ծովի կղզիները, երբ Լօզանի դաշնագրութեան պայմաններն իրագործված լինեն։ Մինիստրների նախագահն իր այս սեղմ ու պակասաւոր արտայայտութեամբ անկասկած մի փոքրիկ թիւրիմացութեան տեղիք է տուել։ Իտալիան խոստացել է այդ կղզիները յանձնել ո՛չ թէ Եւրոպային, այլ Թիւրքիային. իսկ Եւրոպայի պաշտօնը պիտի լինի Իտալիայի հետ միասին—մի բան, որ մինիստր-նախագահ Բարտուն զանց է առել յիշելու—անօրինել կղզիների վիճակը, այսինքն որոշել, թէ նրանք բոլորն էլ Թիւրքիային պիտի պատկանե՞ն, թէ՞ նրանցից մէկը կամ մի քանիսը պիտի բաժին հասնեն Իտալիային։ Եւ եթէ աչքի առաջ ունենանք այն հանգամանքը, որ Իտալիան այժմ ակնյայտնի տրամադրութիւններ է ցոյց տալիս զանց առնելու իր հանդիսաւոր խոստումը և որոշել է այդ կղզիներից եթէ

Թաղերուն մէջ հայ տառերու գիւտին 1500-ամեակը և հայ տպագրութեան չորեքդարեան յոբելեանը։

Կը յանձնարարենք ուրեմն պատ. խորհրդիդ, որ նկատի ունենալով մեր ազգային գոյութեան տեսակէտով այս զոյգ մը աւագ տօնին ամենամեծ նշանակութիւնը՝ բարեհաճի փոյթ և հոգածութիւն չխնայել կազմակերպելու նոյն օրուան համար եկեղեցական և ժողովրդական կրկնակ հանդէսներ, որոնք կարենան արժանապէս պանծացնել մեր մեծանուն նախնեաց՝ Սահակայ և Մեսրոպայ խնկելի յիշատակը և ի վեր հանել անոնց կատարած գործին մեծութիւնը։

Եւ որպէսզի ամեն հայու սրտին խօսող այս տարեդարձի հանդէսները օգտակար արդիւնքով մը անմահանան ու կրեն յաւերժական կնիք մը, կը յանձնարարենք նաև, որ հանդէսի կազմակերպութեան առթիւ հոգ տանիք մասնաւոր հանգանակութեամբ և կամ ուրիշ յարմար ձևով մը ստանալ պատուական մերազնէից սիրայօժար և լիառատ նուէրները, որոնք միանալով ուրիշներու հետ՝ պիտի կազմեն կրթական այն ֆոնդը, որ պիտի յատկանայ գաւառի մէջ վարժապետանոցի մը հաստատման՝ իբր արժանի յուշարձան մեր կրթական անմոռաց ռահվիրաներուն՝ Սահակայ և Մեսրոպայ։

Լի վստահութեամբ, թէ ամեն հայ պիտի փութայ կատարել իր այս նուիրական պարտականութիւնը և թէ պատ. խորհուրդդ ոչինչ պիտի չխնայէ հանդէսին կանոնաւորութեան և վայելչութեան մասին, կօրհնենք ձեր բոլոր ջանքերը ու մաղթելով նախախնամութեան ա. աջը հովանի ու պահապան ողջոյն հայ ազգին վրայ՝

Մնամք ողջունիւ հայրական սիրոյ՝
Աղօթարար
Պատրիարքական տեղապահ՝
Գաբրիէլ եպ. Ճէվահիրճեան

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈԲԵԼԵԱՆՆ ՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԸ

Ցառաշիկայ հոկտ. 12—25 Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետը Էջմիածնի մէջ համազգային մեծաշուք հանդէսով մը պիտի փակէ հայ տառերու գիւտին 1500-ամեակին և հայ տպագրութեան 400-ամեակին յոբելեան տարին, որուն բացումը կատարած էր անցեալ տարի Թարգմանչաց տօնին՝ ճիշդ միևնոյն օրը։

Թիւրքահայ ներկայ ճգնաժամին մէջ, երբ հայութեան ստուարագոյն հատուածն ամեն օր լինելու ու չլինելու միջև կը տարուբերի, հայ ազգին մտաւորական զարգացումին այս երկու պատմական հանգրուաններուն յոբելինական յատուկ հանդէսներով վերյուշումին ինքնին սրտառուչ ու կազդուրող բան մը ունի և ցեղին արժանիքն ու կենսունակութիւնը կը հռչակէ։

15 դար առաջ Արևելքէն ու Արևմուտքէն զառացող փոթորիկներու միջև, երբ քաղաքական խարխուլ գոյութեան սպառնացող նուաբեկութենէն անհաբեկ, հայը իրեն համար քաղաքակիրթ գոյութիւն մը կերտել ձեռնարկեց ու առաջինն, ինչպէս նաև վերջինն եղաւ Ասիոյ ժողովուրդներուն մէջ, որ հելլենական դրութեամբ իր սեփական տառերն ունեցաւ և գրական ու կրօնական շարժումէ մը ազգային կեանք մը ստեղծեց։

400 տարի առաջ օսմանեան ու պարսիկ բանակներուն ոտնակոխ իր բնագաւառէն հալածական, միևնոյն հայութիւնը, յանձին Մեղաւոր Յակոբներու, Աբգար Դպիրներու, Մխիթար աբբաներու ու Ոսկան վարդապետներու, Հռոմէն մինչև Աստրախանի խորշերն ու Ամստերդամ կը թափառէր իր գոյութեան համար յոյս ու իր մտքին ճրագը վառ պահելու համար լոյս սրսկելով, ու դարձեալ մօտիկ Ասիոյ ժողովուրդներուն մէջ՝ ինք առաջինը կըլլար, որ Գիւտենբերգի հրաշագործ մեքենան գործածել կը սկսէր։

Ու այսօր ահռելի տառապանքներու մէջ սովալլուկ տուայտող ու մասնիկ առ մասնիկ յօշոտուող չարակոչկոծ հայութիւնը թէև աւելի քան երբէք քաղաքական մռայլ ու ալեկոծ կացութեան մը մատնուած, բայց դարձեալ իր քրտինքին ու արիւնին գնով փարած կը մնայ դաստիարակութեան փրկարար լաստին ու հակառակ իր դէմ ցցուող խութերուն ու խոչընդոտներուն՝ զայն առաջ կը վարէ այնքան բուռն թափով, որչափ կրնայ։

Հայկական խնդրոյն շուրջ՝ Մարսէլ Լէարի ֆրանսերէն նոր հրատարակութեան մէջ—«La Question Arménienne à la lumière des documents»—ինչ որ ամենէն աւելի նպաստաւոր ու սրտապնդող է մեզ համար ու ցայտուն գիծերով ի վեր կը հանէ հայ ցեղին բարձր արժէքը զինք շրջապատող տարրերու մէջ և իրաւունքն իբր ինքնուրոյն ազգ իր գոյութիւնը պահելու ու ապրելու, Թիւրքահայաստանի կրթական կացութիւնը պատկերացնող պերճախօս թուանշաններն են։

Ազգ. պատրիարքարանի կողմէ 1901—1902 թ. հրատարակուած պաշտօնական տեղեկագրի մը վրայ հիմնուելով, Մարսէլ Լէար ցոյց կուտայ, որ Աբդուլ Համիդի օրով իսկ, հայկական մեծ ջարդերէն հազիւ հինգ տարի յետոյ, հայերը Թիւրքահայաստանի մէջ ունէին 438 վարժարան 36,839 երկսեռ ուսանողներով, Կիլիկիոյ մէջ 90 վարժարան 9,182 ուսանող և Թիւրքիոյ միւս նահանգներուն մէջ 275 վարժարան 35,225 ուսանող, համագումար 803 վարժարան 81,226 երկսեռ ուսանող։ Աւելցնելով այս թուերուն վրայ հայ կաթոլիկներուն ու բողոքականներուն 250 վարժարաններն 30,000 աշակերտներով, ինչպէս նաև մասնաւոր վարժարաններն, արհաւիրքի այդ շրջանին մէջ հայ դպրոցներու թիւը կարելի է հաշուել 1200, 130,000 երկսեռ ուսանողներով։

Սահմանադրութենէն յետոյ, կը շարունակէ նոյն հեղինակը, հայերը կրկնապատկեցին իրենց ջանքերն ու զոհողութիւնները հանրային կրթութեան համար։ Միայն Մամուրէթ-իւլ-Ազիզ վիլայէթին մէջ, որ կը պարունակէ Խարբերդի, Մալաթիայի, Արաբկիրի, Ակնայ, Չմշկածագի ու Չարսանճագի շրջանակը, վարժարաններու թիւը 73-էն 220-ի բարձրացած է, իսկ աշակերտներունը՝ 5858-էն 28,500-ի։

1912—13-ի տարեկան տեղեկագրին համեմատ Հայոց Միացեալ Ընկերութիւնները, վերջին չորս տարիներու ընթացքին, Կիլիկիոյ ու Հայաստանի մէջ հաստատած են 102 նոր վարժարաններ, 8079 երկսեռ ուսանողներով, իսկ Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնը բացած է 36 վարժարան, ուր կը դաստիարակուին իգական սեռէ 3270 ուսանողներ։

Ու Մարսէլ Լէար հետևեալ կերպով կամփոփէ իր շահեկան տեղեկութիւնները։

Օտար միսիոնարներու ձեռքով հիմնուած հաստատութիւններն և հայ կաթոլիկ ու բողոքական վարժարաններն ալ միասին առնելով, այսօր Թիւրքահայաստանի մէջ, առանց Կիլիկիան ու Թիւրքիոյ միացեալ մասերը հաշուի մէջ դնելու, հայերն ունին մօտաւորապէս 785 կրթական հաստատութիւն, աւելի քան 82,000 ուսանողներով, մինչդեռ նոյն շրջանակին մէջ հազիւ 150 թիւրք դպրոցներ կան 17,000 ուսանողներով։ Քիւրդերը նոյն իսկ մէկ հատ վարժարան չունին։

Զանոնք, որ կեղակարծ ու արուեստակեալ հաշիւներ յառաջ քշելով շարունակ կը յեղյեղեն՝ թէ հայերը զանցառելի քանակ մը կը կազմեն «Արևելեան Անատոլու»-ի մէջ, հետևաբար Հայաստան գոյութիւն չունի ու չի կրնար ունենալ, թող այս թիւերը տարհամոզեն։ Հայ ազգը եթէ դժբաղդ պարագաներու բերումով անկարող գտնուած է յաճախ ֆիզիկական ուժի ապաւինելով ինքզինք ու իր գոյութիւնը յարգել տալ, սակայն մտքի ուժով յաղթանակը ապահոված և իբր գերակշիռ տարր միշտ իր դիրքը պահած է հայ հողին վրայ։ Հայաստանը, որ երևակայական վախերով ու սին կասկածներով կը ճնշէ շատերու մտածումներուն վրայ, հո՛ն՝ այդ ութ հարիւր դպրոցներուն մէջն է, անբռնաբարելի ու անկործանելի։ Եաթաղանն ու կացինը ժամանակ մըն ալ կրնան իրենց դժոխային դերը շարունակ փորձել։ «Հիքմէթի հիւքիւմէթը» դիւային ծրագիրներ ու տարազներ կրնայ յղանալ, կրնայ իրեն համար պահել այն պատրանքը, թէ հայութիւնը հողի հաւասար կործանած ու արմատախիլ եղած է, քանի հայ ընդունակ ու զարգացուն միտքը կայ ու կը գործէ, հայութեան ճղակոտոր կոճը նոր ընձիւղներով պիտի ծաղկի, պիտի ապրի շարունակ։ Ասխական անմեռելի իրողութիւն մը եղած է անցեալին մէջ, ու ապագային ալ անառարկելի իրողութիւն մը ըլլալ սահմանուած է։

Այս տեսակէտէն դիտելով, սովորական յոբելեանէ մը անհամեմատ աւելի բարձր ու խորհրդաւոր նշանակութիւն մը կը ստանան հայ տառերու գիւտին 1500-ամեակն ու հայ տպագրութեան 400-ամեակը տօնելու համար կատարուած հանդէսները։ Հայը իր ապրելու, մարդկային ընդհանուր քաղաքակրթութեան ու յառաջդիմութեան ծառայող ժողովուրդներու շարքին մէջ դիրք մը գրաւելու իրաւունքն ու զինք շրջապատող անոպայ տարրերուն վրայ իր առաւելութիւնները հռչակել լաւագոյն կերպ ու միջոց մը և իր պատմական գոյութիւնն ու դերը ժխտողներուն սարկութիւնները հերքելու համար աւելի զօրաւոր փաստ մը չէր կրնար գտնել։

Ու Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետն այս կրկին մեծ յոբելեաններուն յիշատակը յաւերժացնելու համար՝ աւելի բարեդէպ ու փառաւոր ծրագիր մը չէր կրնար յղանալ ու հրամայել, քան համազգային դպրոցական ֆոնդի մը հաստատութիւնն, որ այնքան ջերմ ու սրտագին ընդունելութիւն մը գտաւ մեր կովկասահայ եղբայրներուն մէջ ու արդէն իսկ հարիւր հազարաւոր րուբլիներու գումարի մը հասած է։

Ցաւալի է, որ ինչպէս ուրիշ պարագաներու մէջ՝ հոս ալ ներքին անհասկացողութիւնն ու անհամերաշխութիւնը ծայր տուաւ դարձեալ։ Այն շրջանակներն, որ իրենց սկզբունք ընտրած են հակառակիլ ամեն ձեռնարկի, որ ազգովին ու ազգին համար կըլլայ, փոխանակ իրենց միջոցաւ ու իրենց համար ըլլալու, հայրապետական կարգադրութիւնը չեզոքացնել փորձեցին՝ համազգային դպրոցական ֆոնդին դէմ գրական ֆոնդի մը առաջարկը հանելով, որուն խակութիւնն ու նպատակը այնքան յստակ կերպով մէջտեղ դրաւ ռուսահայերու աւագ ու կարևորագոյն օրգանը «Մշակ» կուռ ու ջախջախիչ յօդուածներով։

Վստահ ենք, որ յարուցուած անտեղի պայքարն ոևէ չափով ստուեր չի կրնար ածել թէ կատարուելիք յոբելեանին համազգային հանգամանքին ու շուքին և թէ արդիւնքին վրայ, ու համազգային դպրոցական ֆոնդին յաջողութիւնը կը գէ կանցնի ամեն ակընկալութիւն, որուն մասնակցիլն ուր որ ալ ըլլայ ամեն հայու, մանաւանդ բարեկեցիկ հայերու պարտականութիւնն է։

(«Ազգ»)

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### «РУССКІЯ ВѢДОМОСТИ» ԼՐԱԳՐԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Ինչպէս գիտենք, այս տարի լրացաւ ռուսական մամուլի լաւագոյն, առաջադէմ և ազատամիտ օրգաններից մէկի՝ «Рус. Вѣдомости» լրագրի գոյութեան 50-ամեակը։

Մոսկվայի գրական, լուսաւորական, գիտնական և այլ հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչների մի խումբ կազմելով յոբելեանական տօնախմբութեան յանձնաժողով՝ որոշել է կատարել յոբելեանը առաջիկայ հոկտեմբ. 6-ին, Մոսկվայում, ցերեկ. ժամը 1-ին, Գրական-Գեղարուեստական Ակումբում։ Ցերեկվայ հանդէսին տեղի կունենան շնորհաւորութիւններ, ճառախօսութիւններ, իսկ երեկոյեան, նոյն տեղում, կը կայանայ բանկէտ։

Սակայն յոբելեանական յանձնաժողովը չէ բաւականացնել այդ անցողական հանդէսներով։ Նա ծրագրել է յաւերժացնել այդպիսի մի հազուագիւտ յոբելեանը,—որպիսին պէտք է համարել յոբելեանը մի լրագրի, որ ամբողջ 50 տարի, Ռուսաստանում, ընթացել է միևնոյն շաւղով, առանց աջ և ահեակ թեքվելու, այն ևս առաջադիմական, ազատամտական և դեմօկրատիկական շաւղով—մի որևէ բարի գործով։ Նա որոշել է ստեղծել մի օժանդակիչ ֆոնդ գրականագէտների և ժուռնալիստների համար, տալով նրան «Рус. Вѣдомости» անուան դրամագլուխ» կոչումը։ Այդ դրամագլխի կամ ֆոնդի եկամուտը պէտք է գործադրվի՝ նպաստելու այն գրականագէտներին և ժուռնալիստներին, որոնք պէտք ունեն բժշկութեան, հանգստութեան և ցանկանում են լայնացնել իրանց ընդհանուր և մասնագիտական ուսումը, օրինակ՝ ճանապարհորդել զանազան երկիրներ, ի նկատի ունենալով որ այդ կարիքներին գոհացումն տալու ամենալաւ եղանակներից մինը՝ ճանապարհորդութիւնն է։ Ի սրտէ աջողութիւն ցանկալով այդպիսի մի համակրելի ձեռնարկութեան, մենք յոյս ունենք, որ հայ հասարակութեան մէջ ևս կը գտնվեն ցանկացողներ՝ մասնակցելու իրանց լումաներով այդ ֆոնդի կազման։ Ցանկացողները կարող են ուղարկել մեզ իրանց նուէրները, որ մենք կը հասցնենք յոբել. յանձնաժողովին։

Յոբելեանի օրը, հոկտ. 6-ին, շնորհաւորական հեռագիրներ և նամակներ պէտք է ուղարկել այս հասցէով—Москва, Литературно-Художественный Кружокъ, комитету юбилейнаго чествованія «Русскихъ Вѣдомостей».

### ՄԻ ՀԱՄԱԿՐԵԼԻ ՅՈԲԵԼԵԱՆ

Մենք ստացանք հետևեալ գրութիւնը, որ հաճութեամբ ենք տպագրում.

Այս սեպտեմբերի 29-ին, Դուշէթի գաւառի Ցինամձղվարիանքարի գիւղում կայանալու է յոբելեանական հանդէս Ցինամձղվարիանքարի գիւղատնտեսական դպրոցի հիմնարկութեան 30-ամեակի առիթով։

Յոբելեանական յանձնաժողովը, բաղկացած ազնուականութեան, Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան և Վրաց Գիւղատնտեսական Ընկերութեան ներկայացուցիչներից, խնդրում է ձեզ, տէր խմբագիր «Մշակ» լրագրի, յարգել ձեր ներկայութեամբ վերոյիշեալ տօնախմբութիւնը։

Նախագահ յոբելեանական յանձնաժողովի՝
Իշխան Դ. Ի. Ձելօկաեվ
Քարտուղար՝ Վ. Ցխիլաձէ

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

### Եկեղեցին կողոպտողները գտնվեցին

Գորի, 24 սեպտ.

Սեպտ. 23-ի գիշերը՝ գողերը տեղիս ս. Աստուածածնի մայր եկեղեցու տանիքից ներս մտնելով տարել են արծաթէ ոսկեջրած մի աղաւնի, արծաթէ երեք սկիհ, արծաթէ մէկ խաչ և ուրիշ արծաթէ իրեղէններ։ Երբ առաւօտը բաց են անում եկեղեցին և նկատում են գողութիւնը, իսկոյն իմաց են տալիս տեղիս պրիստաւին, որը բերել տուեց ոստիկանատանը եղող շները, որոնք հարիւրաւոր մարդկանց միջից գտան գողերին, որոնք երեք հոգի էին և որոնց վրա արդէն կասկած կար, որովհետև այդ գողերից մէկը երկու շաբաթ սրանից առաջ բանելիս է եղել այդ եկեղեցու տանիքի վրա, ուրեմն և գիտէր բոլոր ճանապարհները։ Այս երեքն էլ պրոֆեսիոնալ գողեր են և քանիցս բանտ են նստած գողութեան համար։ Ցանկալի է, որ տեղիս հասարակութիւնը խնդրամատոյց լինէր իշխանութեան առաջ, որ այսպիսիները ընդմիշտ աքսորվէին այստեղից։

Մեսրոպ Մարութեանց

### Ուսումն. օկր. հոգաբարձուն Սղնախում

Սղնախ, 23 սեպտեմբերի

Սեպտեմբերի 19-ի եր. Ջաքաթալայից Սղնախ եկաւ Կովկասի ուսումն. շրջանի հոգաբարձու Ռուդոլֆը։

Քաղ. բուլվարի վրա հոգաբարձուին դիմաւորելու համար հաւաքվել էին քաղ. դպրոցի և Մարիինսկի օրիորդական դպրոցի աշակերտներ և աշակերտուհիներն իրանց ուսուցիչներով և վարժուհիներով։ Հոգաբարձուն ընդունեցին նուագածութեամբ։ Հետևեալ օրը հոգաբարձուն այցելեց քաղ. և Մարիինսկի դպրոցները։

Ռուդոլֆին ներկայացաւ մի պատգամաւորութիւն, բաղկացած վրացիներից, որը խնդրեց՝ 1) Գիւղատնտեսական միջնակարգ դպրոց հիմնել գաւառում։ 2) Արհեստաւորաց դպրոց հիմնել Սղնախում ջուլհականոցով։ 3) Քաղ. և օրիորդաց դպրոցները վերակազմել, որպէսզի աւարտողները մտնեն միջնակարգ դպրոցի համապատասխան դասարանները։

Ռուդոլֆը խոստացաւ իրագործել այդ 1915 թ., միայն՝ գիւղատնտեսական միջնակարգ դպրոցի հիմնելն աւելորդ համարեց, ասելով որ նախ հարկաւոր է ստորին տիպի գիւղատնտեսական դպրոց։

Հոգաբարձուն նոյն օրը գնաց Ցարսկիէ-Կոլոդցի, ուղեկցութեամբ ժողովրդական դպրոցների տեսուչ Պոգօրելօվի. N. N.

### Եղանակի փոփոխութիւնը եւ վաղահաս ձիւն

Հին-Նախիջևան, 23 սեպտ.

4—5 ամսվայ երաշտից յետոյ սեպտ. 20-ին և 21-ին այնքան առատօրէն անձրև տեղաց, որ ճաքճքած երկիրը կակղեց։ Այժմ ջինջ ու զով օդ է։ Մեր գաւառը զօտևորող լեռ ու լեռնաշղթաները—Մասիսները, Եղրումի լեռնաշղթաները, Մակուի լեռնագօտիները, Քամքու լեռը, Ղափանի լեռները—ծածկվեցին սպիտակ ձիւնով։ Փչում են երբեմն-երբեմն ցրտաշունչ քամիներ։ Տեղացող անձրևները մասնաւոր կերպով ցորենի գները իջեցրին։

Սեպտ. 22-ին պայծառ օր ու արևը շողաց. գիւղերում սկսվեց կեանքը եռալ ուժգին թափով։ Այգեկութը, բամբակաքաղը, բանջարանոցների՝ սոխի, գետնախնձորի հաւաքելն ու աշնանացանը յաջորդում են մէկը միւսին տենդային ջանասիրութեամբ։

Այս տարի բամբակի բերքը թոյլ է, որը առաջ եկաւ երաշտից ու ջրի սակաւութիւնից։

Ա. Տ.-Ստեփանոսեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Փոխարքայի խորհրդի դահլիճում, գ. խ. Հակկէլի նախագահութեամբ սեպտ. 23-ին կայացաւ պոլիտեխնիկումի տեղի հարցով զբաղվող ենթայանձնաժողովի նիստը։ Տեղի հարցի վերջնական լուծումը յետաձգվեց եկող նիստին։ Յանձնաժողովի կազմի մէջ փոխարքան նշանակել է նաև Թիֆլիսի արքունական պալատի կառավարիչ Սմիրնովին։

◆ Այսօր Թիֆլիսի կանանց բարձր դասընթացքներում տեղի կունենայ տարեկան հանդէս։ Դասընթացքների տնօրէն պրոֆ. Բլագովիդովը կը զեկուցանէ դասընթացքների դրութեան մասին յընթացս 1912—13 ուսումնական տարվայ, իսկ պրիվատ-դոցենտ Երնը կը կարդայ դասախօսութիւն նորագոյն դասաւանդման մասին։

◆ Թիֆլիսի էլեկտրաքարշի ծառայողները ժողով գումարելուց յետոյ առաջարկեցին երեք օր բելգիական ընկերութեան ներկայացուցիչ Ռօբին, որպէսզի վերջինս ձեռնհասէ ծառայողների պահանջները և հարթէ նրանց և ընկերութեան վարչութեան յարաբերութիւնները։

◆ Այսօր առաւօտեան, Պետական Դումայի անդամ երդ. հաւ. Միք. Պապաջանեան մեկնում է Թիֆլիսից Երևանի գծով։ Վերադարձը կը լինի մօտ երկու շաբաթից յետոյ։

◆ Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը պայմանաւորվել է «Կրուժոկի» վարչութեան հետ՝ աւարտելու մինչև հոկտ. 15-ը «Կրուժոկի» շինութեան վերանորոգութիւնը, որպէսզի ակումբը կարող լինի տեղափոխվել ամառային շինութիւնից։ Քաղ. վարչութիւնը խնդրել էր «Կրուժոկի» աւագների խորհրդից յատկացնել լրացուցիչ 2000 ռ., որպիսի գումարը ակումբի կողմից արդէն յատկացված է։

◆ Վերադարձաւ Թիֆլիս և ստանձնեց իր պարտականութիւնները անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ բարոն Ռօօպը։

◆ Այսօր վրաց հասարակական գործիչ Ա. Ջորջաձէի մահվան կէս տարին լրանալու առիթով կը կատարվի հոգեհանգիստ հանգուցեալի գերեզմանի վրա։

◆ Թիֆլիսումն է ծառայական գործերով Բաթումի քաղաքագլուխ Մարտինովը։

◆ Հոկտ. 20—24 Թիֆլիսի «Կրուժոկի» ամառային շինութեան մէջ Թռչնաբուծական ընկերութիւնը սովորական տարիների նման կազմակերպելու է թռչունների ցուցահանդէս։

◆ Այսօր Արքունական թատրոնում կը լինի առաջին gala ներկայացումը. կը ներկայացվի «Հուգէնոտներ» օպերան։

---

ոչ մի քանիսը, գոնէ միայն Ռոդոսը պահել ու սեփականացնել, այն ժամանակ հասկանալի կը լինի այն կատաղի զայրոյթը, որ իտալական կառավարութիւնն իր մամուլի միջոցով յայտնեց Ֆրանսիայի վերոյիշեալ չարաբաստիկ տեսակցութեան առիթով։ Միջերկրական նաւատորմի համար Ռոդոս կղզին Կիպրոսից կամ Կրետէից պակաս կարևոր ծովային կայան չէ, և այդ գանցառու քայլով է, որ Իտալիան սկսում է իրագործել Միջերկրականի նաւատորմի ծրագիրը, որի աջողութեան համար Ռոդոսի սեփականացումը մի խոշոր գրաւական է։ Մինչդեռ Ֆրանսիան իր մատը դնում է այդ փափուկ հարցի վրա և յիշեցնելով Իտալիայի խոստումները՝ խանգարել է ուզում նրա ծրագիրները…։

Մամուլի հանած վայնասունը բաւական չէր։ Իտալական կառավարութիւնը որոշել է յետ կանչել Պարիզից իր դեսպան Տիտտոնիին և նրան փոխարինել մի ուրիշ անձնաւորութեամբ։ Այս խնդրին աւելի մօտիկից տեղեակ աղբիւրներին նայելով՝ Տիտտոնին ինքն է հրաժարվել իր պաշտօնից։ Ինչպէս յայտնի է, վերջին յուլիս ամսում, երբ Ֆրանսիան Լոնդոնի կոնֆերանսում Եգէյեան ծովի կղզիների նկատմամբ պաշտպանում էր Յունաստանի շահերը, իտալական կաբինետը իր ներկայացուցիչ Տիտտոնիի միջոցով խոստումներ արեց այդ կղզիներից և ոչ մէկը չը պահել, որպէս զի Ալբանիայի արևմտեան սահմանները որոշելիս աջողի իր տեսակէտը անցկացնել։ Այժմ, երբ Հռոմի կաբինետը կղզիների նկատմամբ հիմնովին փոխել է իր վերաբերմունքը, հասկանալի է անշուշտ, որ այդպիսի հանգամանքում Տիտտոնիի դիրքը Պարիզում միանգամայն խախուտ է դառնում և խիստ անյարմար։

Իտալական միտումները Միջերկրականի նաւատորմի նկատմամբ չեն խուսափել Պարիզի կաբինետից. Ֆրանսիան իր հերթին արդէն սկսել է մի շարք զգուշութիւններ ձեռք առնել։ Անկարող լինելով եղածից աւելի զօրեղացնել իր նաւատորմը, որովհետև եռամեայ զինուորութեան օրէնքի վերահաստատման միջոցին ֆրանսիական կառավարութիւնը ահագին դժուարութիւնների հանդիպեց թէ ժողովրդի, թէ պարլամենտի և թէ մանաւանդ այդ նոր օրէնքի պահանջած խոշոր գումարների առաջ, նա ստիպված է դիմել կողմնակի միջոցների, զինակցութեան ձեռք մեկնել հարևան փոքր պետութիւններին և այդ ձևով սպառնալ իտալական նոր ձգտումներին։ Այսպէս, նա հաշւում է իր կողմը թեքել Յունաստանը, որի նաւատորմն այժմ բաւական զգալի ույժ է ներկայացնում և որի բանակի մէջ ֆրանսիական կրթութեան սիստեմը և ֆրանսիական օֆիցերները մեծ ծառայութիւն և խոշոր դեր են կատարել։ Թէև վերջերս Յունաստանի թագաւորը Բեռլին այցելելիս կայսեր ներկայութեամբ գերմանական բանակի և զինւորականութեան հասցէին նշանակալից օվացիաներ էր արել իր ճառով և լռելեայն արհամարհել ֆրանսիական զինւորականութիւնը, սակայն թագաւորի այդ ճառը, որ խիստ անհաճելի տպաւորութիւն էր ունեցել Ֆրանսիայում, ահագին անբաւականութիւն առաջ բերեց յունական ժողովրդի և զինւորականութեան բոլոր խաւերի մէջ և նկատվեց որպէս մի շատ խոշոր սխալ քայլ. և որպէս զի անմիջապէս ուղղվի այդ սխալը, յունական կառավարութիւնը հրաման տուեց իր թագաւորին շտապով Պարիզ այցելել և, փարատելով անցանկալի անբաւականութիւնն ու թիւրիմացութիւնները, վերահաստատել ու աւելի ևս ամրապնդել ֆրանս-յունական բարեկամական յարաբերութիւնները։ Այդ այցելութիւնը կատարվեց, և այժմ Ֆրանսիան նորից կարող է յոյս դնել Աթէնքի կառավարութեան վրա։

Միւս կողմից՝ Ֆրանսիայի նախագահ Պուանկարէն այցելեց Սպանիայի Ալֆոնս XIII թագաւորին։ Այս տեսակցութիւնն արդիւնք է զուտ քաղաքական միտումների, և ֆրանսիական պաշտօնական մամուլը պարզօրէն յայտարարեց, որ նա նպատակ ունի առաջ բերել մի ֆրանս-սպանական համաձայնութիւն։ Այս միտքը նոր չէ. չորս տարուց աւելի է, որ երկու երկիրների միջև բանակցութիւններ են տեղի ունենում այդ համաձայնութիւնը գլուխ բերելու համար։ Եւ որովհետև Սպանիայի քաղաքական շահերը ներկայումս թելադրում են նրան երրեակ դաշնակցութեան մէջ մտնել, ուստի և նախագահ Պուանկարէն հաւատացած է, որ իր այս այցելութեամբ համաձայնութիւնը վերջապէս պիտի գլուխ գայ, հակառակ որ ամիսներ առաջ Ալֆոնս XIII-ի այցելութիւնը Պարիզում ընթացակցվեց սոցիալիստների նրա դէմ կատարած դժգոհութեան ցոյցերով։

Թէ որքան զօրեղ կը լինի Ֆրանսիայի այդ միջոցով ձեռք բերած զօրավիգը, այդ նկատմամբ պէտք է խոստովանել, որ եթէ տասնեակ տարիներ առաջ եւրոպական երկրորդական պետութիւնների խաղացած դերը փոքր էր մեծ պետութիւնների կօնցերտի մէջ, այժմ նրանք սկսել են արդէն բաւական խոշոր նշանակութիւն ունենալ այդ կօնցերտի և եւրոպական հաւասարակշռութեան մէջ։

Իսկ թէ որքան աջողութիւն կը գտնէ Ֆրանսիան իր այդ ձեռնարկութեան մէջ, ձեռք բերելու միաժամանակ թէ Սպանիայի և թէ Յունաստանի զինակցութիւնը և այդ միջոցով իրան ապահով զգալու Միջերկրական ծովի վրա Իտալիայի դէմ ու խուսափելու նոր ծախսերի ծանրութիւնից, այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան։

Ժընեվ Ա. Զ.

◆ Բագւում իշխ. Դադիանիի սպանութեան գործի առիթով տակաւին շարունակվում են վկաների հարցաքննութիւնը։

◆ Ժողովրդական համալսարանի ընկերութեան վարչութեան նախաձեռնութեամբ, կիրակի, սեպտ. 29-ին, Մ. Մատէնջեան դասախօսելու է Ժողովրդական Տանը «Գեղարուեստը գեղարուեստի համար» թեմայով։

◆ Աստրախանից Գալուստ քահ. Քարտաշեանը հեռագրով իր վիշտն է յայտնում Պարոն Գրիգորի մահվան առիթով։

## ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

### ՊՐՕՖԵՍՕՐ ՍՏՐԺԻԳՕՎՍԿԻԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Երեքշաբթի, սեպտ. 24-ին, երեկոյեան ժ. 9-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում հաւաքվել էր բաւական մեծ բազմութիւն լսելու Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Ստրժիգօվսկիի դասախօսութիւնը «Հայկական գեղարուեստի» մասին։ Թէև դասախօսութիւնը կատարվեց գերմաներէն, ներկայ եղող հանդիսականներից շատերի համար անհասկանալի լեզուով, բայց որովհետև ուսանող Լիսիցեանը թարգմանում էր պրոֆեսորի ասածները հատուածօրէն (թէև ոչ ամբողջութեամբ) և որովհետև դասախօսութիւնը լուսաբանվում էր և պատկերներով մոգական լապտերի միջոցով, ուստի կարելի է ասել, որ դասախօսութեան բովանդակութիւնը հասկանալի եղաւ և՛ գերմաներէն չիմացողներին։

Իսկապէս այն ամենը, ինչ որ ասաց յարգելի պրոֆեսորը, նորութիւն չէր և յայտնի էր բանասէրներին. սակայն մի օտարազգի գիտնականի բերանում նա ունէր իր որոշ նշանակութիւնը։

Յարգելի բեֆերենտը խօսելով հայկական գեղարուեստի և նրա նշանակութեան մասին Արևմուտքի և Պարսկաստանի համար, ցոյց տալով օրինակներով, որ հայկական գեղարուեստը, գլխաւորապէս ճարտարապետական ոճը ազդեցութիւն է ունեցել Արևմուտքի, այսինքն Եւրոպայի ճարտարապետութեան վրա, հետևաբար նա, հայկական գեղարուեստը համաշխարհային նշանակութիւնից զուրկ չէ, շօշափեց այն փաստը, որ իրանք հայերը շատ քիչ գաղափար և ծանօթութիւն ունեն համաշխարհային նշանակութիւն ունեցող այդ գեղարուեստի մասին։ Հայերը ոչ միայն սիստեմատիկօրէն չեն պարապում իրանց նախկին կուլտուրայի կոթողների ուսումնասիրութեամբ, այլ և չեն խրախուսում անհատական ուսումնասիրողներին, ինչպէս օրինակ անխոնջ ու եռանդուն ճարտարապետ Մ. Թօրամանեանին, որի աշխատութիւնները կարևոր նշանակութիւն ունեն հայկական գեղարուեստի պատմութեան համար։

Իր դասախօսութեան վերջում պրոֆեսորը յայտնեց, որ պէտք է լոյս ընծայել Թօրամանեանի աշխատութիւնները, բայց որովհետև դրանց հրատարակութիւնը մեծ ծախս է պահանջում, ուստի հայ հասարակութիւնը պէտք է օգնութեան հասնի։

Հաւաքված հասարակութիւնը ծափահարութիւններով շնորհակալութիւն յայտնեց դասախօսին։

## ՄԱՄՈՒԼ

«Հօրիզօն» թերթը, իբրև ապացոյց, որ Կ. Պոլսի հայ մամուլն ևս պախարակում է էջմիածնի վերջին կարգադրութիւնը մեր ծխական դպրոցների ուսուցիչների մասին, մի քանի ժամանակ առաջ մատնացոյց եղաւ Կ. Պոլսի «Բիւզանդիոն» թերթի մէջ տպված մի թղթակցութեան վրա, որ մի պարոն՝ Վահրիճեան կեղծ ստորագրութեամբ՝ ուղարկել էր այդ թերթին, և սա ևս, առանց որևէ ստուգութեան կամ քննադատութեան տպել էր։ Այդ նամակի մէջ Վահրիճեան (անշուշտ մի «հօրիզօնական») խնդիրը ներկայացրել էր ճիշդ այն ձևով և այն յարձակումներով, ինչպէս «Հօրիզօնը»։ Ցոյց տալով այդ յօդուածը՝ «Հօրիզօնը» չէր մոռացել մի վիրաւորական խօսք ևս շպրտել «Բիւզանդիոնի» հասցէին, ասելով մօտաւորապէս հետևեալը. «Տեսէք, նոյնիսկ «ժուռնալիստ» Բիւզանդ Քէչեանի թերթը պախարակում է էջմիածնի վարմունքը»։

Այժմ նոյն «Բիւզանդիոն» թերթի մէջ տպված է մի այլ թղթակցութիւն, որ առաջ ենք բերում ի տեղեկութիւն «Հօրիզօնի»։

«Ռուսիոյ թերթերուն մէջ քննադատութիւններ կերևին Մայր Աթոռին դէմ որ համակերպած է առանց ոևէ դիտողութեան ռուս կառավարութեան այն կարգադրութեան, որով հայ ուսուցիչներու մասին բարի վկայութիւն պիտի պահանջուի տեղական իշխանութիւններու կողմէ։ Ս. Հայրապետն անտարբեր չէ այս մասին, բայց ինք սրտաբեկ է, երբ կը տեսնէ որ իբրև հոգևոր գլուխ և պետ հայ եկեղեցիի, եկեղեցիներու դրամներով և բարեպաշտներու նուէրներով պահուած վարժարաններուն մէջ, նոյն հոգիով անձեր չեն պատրաստուիր այլ ևս, և ծխական վարժարաններու, ինչպէս նաև աւելի բարձր դպրոցներու մէջ մուտ գործող ուսուցիչներ, օտարոտի գաղափարներով, կուծացնեն հայ տղան իր եկեղեցիէն և իր հայրենի նուիրական աւանդութիւններէն։ Այս վիճակը, որ արձագանգ կը գտնէ մինչև բարձր շրջանակներ և որ աւելի կրնայ վատթարանալ, ո՞վ պիտի դարմանէ և հայ վարժարանը պիտի ծառայեցնէ նախ հայ եկեղեցիի զաւակներ պատրաստելու նպատակին և ինչո՞ւ արդեօք այդ քննադատ թերթերը չեն խօսիր նաև այն ուսուցիչներու վրայ, որոնք իրենց պաշտօնէն դուրս ըլլալով՝ հայ տղաքներու օտարոտի գաղափարներ կը ներշնչեն։ Ս. Հայրապետը տէր-Բագրատ եպիսկոպոսի ջանքերով ճեմարանը իր կոչման բարձրութեան և պահանջման համապատասխան վիճակի մէջ դնելու յաջողած է, իսկ ռուսահայ ժողովուրդին կը մնայ հսկել իր կրթական ուղղութեան վրայ, որ արդի ուղղութեամբ շատ գոհացուցիչ ելքի չպիտի հասնի դժբաղդաբար»։

«Հօրիզօնը» երևի այժմ կը համաձայնի մեզ հետ, որ այդպիսի պատահական թղթակցութիւնների երևումը Կ. Պոլսի թերթերի մէջ և նրանց վրա յենվելը, իբրև Կ. Պոլսի հայ մամուլի կամ հասարակութեան կարծիքի վրա, աւելի քան անտեղի և անյարմար է։

## ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պարիզից տեղեկութիւններ են ստացվել, որ այնտեղ բօրսայում սոսկալի իրարանցում է տիրում շնորհիւ այն լուրերի՝ թէ աւստրիական Ֆրանց Յովսէփ ծերունի կայսրը լուրջ կերպով տկար է։ Եւրոպայի բոլոր մայրաքաղաքներից, ինչպէս և Պետերբուրգից հարցմունք է ուղարկված Վիեննա հեռագրով։

◆ Պետերբուրգի բօլգարական դեսպանը հերքում է բօլգարական թագաւոր Ֆերդինանդի Պետերբուրգ գալու լուրերը։

◆ Անգլիան պայմանագիր կապեց Սպանիայի հետ, որի համաձայն պատերազմի դէպքում սպանական նաւահանգիստները բաց են լինելու անգլիական ռազմանաւերի համար։

◆ Թիւրքիան 70,000 պահեստի զինուոր զէնքի է կանչում Անատոլիայի վիլայէթից։

◆ Կիէվում սօիւզնիկները խորհրդակցում են, թէ ինչպիսի տակտիկա բռնեն Բէյլիսի գործի առիթով։ Տրամադրութիւնը յուզալի է։ Հրէաները սկսել են փախչել քաղաքից։

◆ Մակսիմ Գորկիի յուրջ հիւանդութեան տեղեկութիւնը չը հաստատվեց։

◆ Ոստիկանութեան վերակազմութեան նոր օրինագծի համաձայն, քաղաքներն ազատվում են ոստիկանութեան պահպանման ծախքերից. ոստիկանական պաշտօնները ստանձնելու համար պահանջվում է կրթական ցենզ։

◆ Լուրերի համաձայն՝ Պետերբուրգում հիմնվելու է երկրորդ կօնսերվատօրիա։

◆ Մի խումբ պատգամաւորներ որոշել են Սօսիկա կայարանի մօտի երկաթուղային աղէտի առիթով հարցապնդում ներկայացնել Պետ. Դումայում վլադիկավկազեան երկաթուղային վարչութեան գործերի մասին։

◆ Ներքին գործերի մինիստր Մակլակօվը մեկնեց Լիվադիա ամենահպատակօրէն զեկուցանելու Պետ. Դումայի նստաշրջանը բանալու մասին։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

24 սեպտեմբերի

ՎԻԵՆՆԱ։ Բարձրագոյն շնորհակալութիւն է յայտնվում պաշտօնական հաղորդագրութեամբ գերազանց արի գործունէութեան համար իր պաշտօնը կամովին թողնող կոմս Տուրն-Վալյասսինին, որի փոխարէն աւստրիական դեսպան Պետերբուրգում նշանակվում է կոմս Շապարին։

ԼՕՆԴՕՆ։ Կանայք կատաղի ընդհարում ունեցան ոստիկանութեան հետ, որ վերջում կալանաւորեց միտինգի ճառող Աննա Կեննէյին։

Սուֆրաժիստուհիները հրդեհեցին երկու մեծ տուն Բեդֆօրդում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վերադարձաւ ժողովրդ. լուսաւորութեան մինիստրը։

Փակվեց առողջաբանական ցուցահանդէսը. 11 օրվայ ընթացքում այցելեցին մօտ 300,000 մարդ։

Կապիտան Ջախարօվը զեկուցում կարդաց Սէդօվի աշխատանքների մասին։ Սէդօվը ուղարկել է ընդարձակ օդերևութաբանական ու երկրաբանական ուսումնասիրութիւն։

ԽԵՐՍՕՆ։ Պետ. Դումայի անդամ [illegible]

ԵԱԿՈՒՏՍԿ։ Տեղական [illegible] խանօվը նուիրեց 1,300,000 ր. Եակուտսկում արհեստաւորական դպրոց, մինիստրական ուսումնարան և ձրի բուժարան կառուցանելու և պահպանելու համար։

ՐԻԳԱ։ Տնտեսական հողի վրա գործադուլ արին 150 բանւոր։

ԲԵՐԼԻՆ։ Բացվեց էսթէտիկայի և գեղարուեստը ուսումնասիրող կօնգրէսը մասնակցութեամբ Եւրոպայի զանազան տէրութիւնների բոլոր ֆակուլտէտների պրօֆեսօրների։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչ՝ ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐ

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

### ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պոստային գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—**Պոստային գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պոստային գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագօններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12 ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. ր.50 ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բորժոմ 9 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բորժոմ 1 ժ. 2 ր. երեկ.։

### ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պոստային գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պոստային գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պոստային գնացքը** № 4Д/3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագօններով)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ և վաճառվում է
„ԾԻԾԱՂԱԲԵՐ"
պատկերազարդ

ԾԻԾԱՂԱԲԵՐ
ՀԱՅ և ՕՏԱՐ ԲԱԶՄԻՆՆԵՐՈՎ
200-Ի ՉԱՓ ԸՆՏԻՐ
ԶՈՒԱՐՃԱԽՕՍՈՒԹԻՒՆ
ԱՆԵԿԴՕՏՆԵՐ
ԹԻՖԼԻՍ

Հայրիկ, Բիսմարկ, Պուշկին, Պլլը-Պուղի, Մօլլա Նասրեդդին և ուրիշ ազգային և օտար զուարճախօսներ. 200-ի չափ ԸՆՏԻՐ անեկդօտներ։ 128 էջ։
Գինն է 30 կոպէկ։
Պահեստ մեզ մօտ. մեզանից գումարով գնողներին 30%—40%-զեղչ՝ միայն կանխավճարով։ Դիմել մշտական հասցէով Тифлисъ, Лысогорскій пер. № 6. ХАЧАТУРУ ХАЧАТРЯНУ.
Դիմել նաև բոլոր գրավաճառներին։
(հ. կ.) 812. 10—1

Արտասահման ուղևորվելու պատճառով
ԾԱԽՎՈՒՄ Է
շատ մատչելի գնով
ՎԱՐՍԱՎԻՐԻ ԽԱՆՈՒԹ
(Парикмахерская)
իր կահ-կարասիքով։ Խանութը գտնվում է Թիֆլիսի բանուկ փողոցներից մէկում։ Տեղեկանալ Միքայէլեան փող. № 55, Ա. Բ. Եղիկեանից։
818. 1—1

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
ԿԱԹՆԱՏՈՒՆ—„ՃՎԷՅՑԱՐԻԱ"—ԿՕՆԴԻՏԵՐՍԿԱՅԱ
ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔԵԱՆ ՓՈՂՈՑԻՑ № 6 ՏԵՂԱՓՈԽՎԵՑ ԳԷՕՐԳԻԵՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ № 1, տուն Միրիմանեանի, Քաշվէթի եկեղ. հանդէպ, շքեղապէս վերանորոգված բնակարանը։
Մթերքները թարմ եւ մատչելի գներով։ Ստացվում են բոլոր թերթերը։
Յարգանօք՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ
(կ. հ.) 779. 6—5

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ի յիշատակ հայ գրերի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ Է
Հայերէն հրատարակութիւնների ցուցահանդէս
որ պէտք է բացվի Թիֆլիսում 1913 թ. հոկտ. 6-ին և տևելու է մինչև նոյն ամսի 12-ը։
Ուստի խորհուրդը խնդրում է պ. պ. հեղինակներին, հրատարակիչներին, պարբերականատէրերին և ամեն մի հայի՝ ուղարկել Ընկերութեանս հայերէն ամեն տեսակ հրատարակութիւններ, հայկական վիմատիպ պատկերներ և քարտէզներ։
Այն հրատարակութիւնները, որ կը նուիրվեն Ընկերութեանս և կամ դրամով ձեռք կը բերվեն, ցուցահանդէսից յետոյ պիտի պահվեն Ազգագրական Ընկ. մատենադարանում, որ այդպիսով դառնալու է մի **մնայուն ցուցարան** հայ գրերի և տպագրութեան, իսկ ասոնք ցուցադրվելու նպատակով ստացվածները կը վերադարձվեն տէրերին։
Ամեն ինչ պէտք է ուղարկել այս հասցէով. Армянскому Этнографическому Обществу. Тифлисъ
Խորհրդի նախագահ՝ Ս. Մելիք-Ազարեան
Անդամ-քարտուղար՝ Ե. Լալայեան
(հ.) 799. 2—2

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
Առևտրական Գիտութիւնների Կուրսերում
ՆՈՐ ՄԵԹՕԴՕՎ ՍՈՎՈՐԵՑՎՈՒՄ ԵՆ
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ
ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ Ձրի փորձական Դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր ժամը 10—12-ը և 4—7-ը։ Միխայլօվսկի պր. № 24—4.
(օ. մ.) 743. 0—9

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Գ. եւ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ
Նիկօլայեւսկայա, 36, Վօրօնցօվի արձանի մօտ։ Ընդունելութիւնը երեկոյեան ժամը 4—7-ը։
613. 50—37

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/4. Տելեֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
**Գործնական** պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են իրական կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն՝ արագագրութիւն (ամենայատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) **Օտար լեզուներ.** 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (ըմբինդտօն և այլ. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և զատ-զատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշ- [illegible] կուրսերը ընթացաւարտներից և նրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 284 ունկնդիր, որոնցից 53 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ա. օ.) 556. 0—40

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
L. ՏՕԼՍՏՕՅԻ հետևեալ երկերը.
1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, թարգմ. Սուրխաթեանի . . . . . . . 30 կ.
2) ԿՕՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), խմբագրութեամբ Լ. Ն. Տօլստոյի, կազմեց Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրխաթեանի . . . . . . . . 7 կ.
3) ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՕՄԵԴԻ, ընտրված Լ. Տօլստոյից, թարգ. Լ. Դանիէլեանի . . . . . . 5 կ.
4) ՔՈՅՐԵՐԸ, թարգ. Դանիէլեանի . 5 կ.
5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, թարգմ. Լ. Դանիէլեանի . . . 10 կ.
Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 10% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չի լինի։
Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.
(3) 10—9

Մամուլի տակից
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԾԱՆՐ ԵՐԱԶ
պիէսը չորս գործողութեամբ
ԼԵՒՈՆ ՔԱԼԱՆԹԱՐԻ
Վաճառվում է «ԳՈՒՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցում։
ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.
(օ. մ.) 815. 10—2

Սեպտեմբերի 10-ից վաճառվում է
Դպրոցական տօների
ԵՐԳԵՐ և ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ
(Հայրապետական, Թարգմանչաց, Վարդանանց, տօնածառի, խառն ժողովրդական)
Գինն է 20 կոպ.
Դիմել՝ Армавиръ, учителю-регенту М. Тарахчіанъ և «Գուտենբերգ» ու «Գիր» գրավաճառանոցներին։
(հ.) 727. 5—4

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Նիկ. Աբրահամեանի
հետևեալ հրատարակութիւնները.
I
ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ
երկաթ., կոլոնիալ, բակալ. և բամբակէ ապրանքների (առաջին անգամն է, որ լոյս է տեսնում հայերէն լեզուով), գինն է 2 ռուբ.։
II
Руководство торг. бухгалтеріи
въ связи съ керосинозав. производствомъ (2 допол. и исправл. изд.) Ц. 2 р. 50 к.
III
Таблица вычисл. процентовъ
отъ 1 до 360 дн. отъ 1/4 до 12% и на всѣ капиталы отъ 1 до 10,000 р. (2 изд.) Ц. 85 к.
IV
Журнальныя статьи
для опредѣл. дебета и кредита. Ц. 75 к.
V
Общедоступная справочн. книжка
для слушателей и слушательницъ бухгалтерск. курсовъ и занимающихся конторскими дѣлами. Ц. 30 к.
Հեղինակի մօտ՝ Бухг. курсы Н. В. Абраамяна, Николаевская, 22 և գրավաճառանոցներում։
(Ե.հ.կ.) 680. 20—14

Չափահասների համար
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
Բժշկ. ֆէլդշէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ
1) «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վեներական և այլ ցաւեր), բազմաթիւ բէցէպտներով, խորհուրդներով և նկարներով։ Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Լեզուն շատ պարզ ու ամենքին հասկանալի։ Գինն է 50 կ.։
2) «Տրիպէր (սուսանակ) եւ նրա բժշկութիւնը» բէցէպտներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով։ Գինն է 20 կ.։
3) «Ներկարմատի օսլվարը կամ մէջքի [illegible]», խիստ [illegible] չափահասների համար։ Գինը 20 կ.։
4) «Սօճայի Եռանդէքը» յայտնի վօդէվիլը, շատ ծիծաղաշարժ 2-րդ հրատարակութիւն։ Գինը 15 կ.
5) «Միւնոյն դագաղում», պատմուածք հայ-ծուրական կեանքից. գիւղերի նկարներով Գինը 7 կ.։
6) «Բաճճիի կենսագրութիւնը», պատկերով։ Ամենքին հասկանալի գրված։ Գինը 10 կ.։
Ուղարկում եմ բոլոր գրքերը միասին։ Պահանջողները պէտք է առաջուց զրկեն գրքերի գինը մարկաներով ճանապարհածախսը՝ բոլոր գրքերը միասին—17 կոպ. (Ընդայման՝ զակազնոյ)։ Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г Есаянцу.
(հ. կ.) 44. 100—53

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный